community

The New Apostolic Church around the world

04/2020/AM

Հոգեզալուստ 2020՝ Ազատության ոգին

Առաջնորդող հոդված
Աստծո հավատարմությունը

Ժամերգություն
Ճանաչել ու սիրել

Եկեղեցական ուսմունք
Աստվածային կոչում
Լավ զգացողություն
պարգևող եկեղեցի

New Apostolic Church
International

Աստծո հավատարմությունը մեզ տանում է դեպի իր հետ միասնության

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

,, Հավատարիմ է Աստված, որից կանչվեցիք հաղորդակից լինելու նրա Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին,, / Կորնթացիներին Ա 1,9/: Երբ ես կարդում եմ աստվածաշնչյան այս խոսքը, մտածում եմ ձեր մասին: Մեզնից յուրաքանչյուրն ապրում է իր սեփական կյանքը: Այն ընթանում է վերելքներով և վայրէջքներով, երբեմն՝ լի վախերով ու հետո՝ նորից ուրախություններով: Մեր մխիթարությունն այն է, որ Աստված հավատարիմ է: Նա անում է այն, ինչ ասում է: Մեզ՝ մարդկանցս համար հավանաբար միշտ չէ, որ դա զգալի է, մանավանդ որ մենք ծանոթ ենք աստվածային պլանի միայն շատ փոքր հատվածին, որը նա մեզ համար է պատրաստում:

Աստվածն է, որ մեզ կանչել է դեպի իր Որդի Հիսուս Քրիստոսի հետ միասնության: Նա կանչում է մեզ, նա ընտրում է մեզ – ոչ թե՝ հակառակը: Նա յուրաքանչյուր առանձին մարդու ավելի լավ է ճանաչում, քան այդ անձն ինքն իրեն, և գիտի ամեն ինչ: Եվ նա յուրաքանչյուրին տալիս է ազատություն՝ հետևելու կամ չհետևելու այդ կանչին:

Աստված մեզ կանչում է դեպի Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ հետ միասնության: Դա Հիսուսն ինքն է հաստատել՝ նա ուզում է, որ մենք լինենք այնտեղ, որտեղ նա է: Սակայն, նաև այստեղ ու հիմա մենք արդեն Աստծո Որդու հետ կենսական միասնության մեջ ենք գտնվում: Կյանքի բոլոր իրավիճակներում մենք նրա հետ միասին ենք՝

- Մենք մեր սեփական տառապանքների մեջ պայքարում ենք այն բանի համար, որ մնանք Աստծո հետ միասնության մեջ:
- Մենք աջակցում ենք Հիսուսին իր առաջադրանքի մեջ և տեղեկացնում ենք Ավետարանը նրանով, որ անում ենք բարին:
- Մենք ոչ մի ժամանակահատվածում չենք մոռանում այդ առաքելության մասին, այլ դա դարձնում ենք ամենավեհ առաջնայնությունը:

Աստված կանչում է դեպի հավատացյալների միություն – դեպի եկեղեցի՝

- Մենք պետք է միասին լինենք և միասին գործենք, միասին աղոթենք, միասին տոնենք, միասին աշխատենք:
- Մենք պետք է ուժեղացնենք միությունը և պայքարենք երկպառակության դեմ: Մենք վանում ենք բամբասանքները, անցյալը հանգիստ ենք թողնում, և խոսում ենք բարու, ոչ թե չարի մասին:
- Մենք ծառայում ենք միմյանց և տարբերակում չենք դնում հաճախորդի ու մատակարարի միջև՝ յուրաքանչյուրը կարող է նպաստել միասնության ամրապնդմանը:

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Աստված կանչում է Սուրբ Հաղորդության միասնականության՝

- Այն նախաճաշակումն է Գառան հարսանիքի:
- Այն մեզ հիշեցնում է, որ Քրիստոսն ամեն ինչ կիսել է մարդկանց հետ, նաև՝ տառապանքն ու մահը:
- Այն մեզ ուժ է տալիս պայքարելու այնպես, ինչպես նա է պայքարել:
- Այն ուժեղացնում է եղբայրական միությունը միմյանցով: Բոլորի համար նա տվել է նույն հացն ու նույն գինին, և Սուրբ Հաղորդության տոնակատարությունը: Ի՞նչ կանեինք մենք առանց միասնականության:

Շնորհակալություն Տեր, որ Դու մեզ համար հնարավոր դարձրեցիր այդ միության մասնիկը լինելը :

Սրտագին ողջույններ

Ժան-Լյուք Շնայդեր

Լուսանկարը՝ Մարսել Ֆելդեի

համացանցային հեռուստատեսությամբ և հեռախոսներով

Ճանաչել և սիրել

Կորնթացիներին Բ 3,17

,, Որովհետև, Տերն ինքը Հոգին է, ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է,,:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, Հոգեգալուստը տոնելը իսկապես ինչ-որ մի առանձնահատուկ բան է: Սովորականի նման մենք կհավաքվեինք, որպեսզի տոնեինք Սուրբ Հոգով լցվելը, որը մենք բնորոշում ենք նաև որպես Քրիստոսի եկեղեցու ծննդյան պահ: Մենք միասին աղոթում և երգում ենք, երկրպագում ենք Աստծուն, և մենք սովոր ենք նաև Հոգեգալստյանը մեր երկնային Հորից առանձնահատուկ օրհնանք ստանալուն: Մենք օրհնված ենք նրանով, որ կարողանում ենք հավաքվել որպես միություն, որ մենք ընդունում ենք Աստծո խոսքը, որ տոնում ենք Սուրբ Հաղորդությունը ինչպես մեզ, այնպես էլ՝ ննջեցյալների համար: Իսկ հիմա Աստված փոխել է մեր պլանները, և մենք չենք կարողանում հավաքվել, չենք կարողանում տոնել Սուրբ Հաղորդությունը

ինչպես մեզ, այնպես և ննջեցյալների համար, իսկ դրա համար մենք բացատրություն չունենք- ես՝ ինքս, չունեմ այդ բացատրությունը: Միակ բանը, որ կարող ենք մենք անել, դա այն է, որ մեզ հնազանդորեն պահենք Աստծո ձեռքի ներքո: Այս առումով եկեք մի հայացք ուղղենք Քանանի կնոջ պատմության վրա, ով իր դստերը բուժելու խնդրանքով եկավ Հիսուսի մոտ: Հիսուսը մերժեց, քանի որ նա հեթանոսուհի էր: Կինն ասաց.„ Եթե ես հացը չեմ կարող ստանալ, ապա գոհ կլինեմ նաև փշրանքների համար„: Երբ Հիսուսը տեսավ նրա հավատը, կինը ստացավ այն, ինչի համար աղոթել էր / հմտ. Մատթեոս 15,21/:

Այս պահին մենք չենք կարող օրհնանքի ողջ բաժինը ստանալ: Ինչ-որ պատճառով Աստված որոշել է այսպես՝ Դուք ստանալու եք միայն հացի փշրանքներ: Սակայն, մենք վստահում ենք մեր երկնային Հորը և ասում՝ Եթե մենք ստանանք հացի փշրանքները, ապա մենք օրհված կլինենք այդ հացի փշրանքներով: Իհարկե, մենք ձգտելու ենք ստանալ կերակրացանկի մեջ ներառված ողջ բաժինը, և մենք աղոթում ենք այն բանի համար, որ ինչքան հնարավոր է, արագ այն նորից ստանանք: Ես ասել եմ, որ Աստված փոխել է մեր պլանները, դա այդպես է շատերի համար, շատ եղբայրների ու քույրերի համար: Սիրելի մարդկանցից մեկը մահացել է, մյուսները շատ փող կամ էլ եկամտի աղբյուրն են կորցրել: Շատ տարածաշրջաններում մարդիկ չեն կարողանում հոգալ իրենց ապրուստը: Մեր պլանները փոխվել են Աստծո կողմից, բայց Աստված չի փոխել իր պլանը: Նա ցանկանում է իր ժողովրդին իր արքայություն տանել: Նա ցանկանում է մեզ մխիթարել, ուժեղացնել ու օհնել, և նա դա անելու է: Սուրբ Հոգին մեզ հիշեցնում է՝ Դու Աստծո զավակ ես, քո երկնային Հայրը քեզ չի մոռանալու:

Հիմա եկեք տոնենք Հոգեգալուստը և լսենք աստվածաշնչյան ընթերցումը / Աստվածաշնչյան ընթերցում Գործք առաքելոցից՝ 2,1-4,12-21/:

Այո, առաջին Հոգեգալուստը Աստծո փրկության պլանի առաջին և վճռորոշ քայլն էր: Հայրն ու Որդին երկիր ուղարկեցին Սուրբ Հոգին այնպես, ինչպես նախապես Հայրը Որդուն էր երկիր ուղարկել: Իհարկե, Որդին և Սուրբ Հոգին միշտ մեկ միություն են կազմում Հոր հետ և իրենց աշխատանքը միասին են անում երկրի վրա և ամենուր: Սակայն, մենք գիտենք, որ Հայր Աստվածն իր Որդուն որոշակի առաջադրանքով է ուղարկել երկիր՝ Որդին մարդացավ, որպեսզի տեղեկացնի Աստծո կամքը: Նա ասաց՝ Իմ ուսմունքը ինձնից չէ, այլ՝ ես ձեզ ասում եմ այն, որը Աստծո ուսմունքն է / հմտ. Հովհաննես 7,16/:

Աստծո Որդու երկրորդ առաջադրանքը մարդկանց հավաքելն ու Աստծո արքայություն տանելն էր:

Երրորդ առաջադրանքն իրեն զոհաբերելն էր, որպեսզի ընդհանրապես մարդկանց համար դեպի Աստվածը գալու հնարավորություն ստեղծի: Այն բանից հետո, երբ նա կատարեց այդ առաջադրանքը, ետ վերադարձավ Հոր մոտ: Ապա Աստված մի առանձնահատուկ առաջադրանքով երկիր ուղարկեց Հոգուն՝

Սուրբ Հոգու առաջադրանքը Աստծո կամքը տեղեկացնելն է: Հիսուսը մի անգամ աշակերտներին ասաց .„Դեռ շատ բան ունեմ ձեզ ասելու, բայց Հոգին գալու է և ձեզ առաջնորդելու դեպի ճշմարտություն / հմտ. Հովհաննես 16, 12,13/„:

Սուրբ Հոգին գործում է մարդկանց մեջ և մարդկանց միջոցով

Սուրբ Հոգու երկրորդ առաջադրանքը Աստծո ժողովրդին հավաքելն է: Սուրբ Հոգու ուժի շնորհիվ Աստծո ժողովուրդը միանում է Քրիստոսի մարմնին:

Երրորդ առաջադրանքը Քրիստոսի հարսնացուին նախապատրաստելն է: Սուրբ Հոգին ուզում է մեր մեջ ձևավորել նոր արարածին, որ մեր էությունը ավելի շատ նմանվի Հիսուսի պատկերին, որպեսզի մեզ համար հնարավոր լինի Աստծո արքայություն գնալը:

Սուրբ Հոգին գործում է որպես մի ուժ, այն անտեսանելի է: Այն գործում է մարդկանց մեջ և մարդկանց միջոցով: Որպեսզի նա այս երեք առաջադրանքներն իրականացնի, մարդկանց կարիքն ունի: Դրա համար էլ Սուրբ Հոգին վերցնում է մարդկանց, սրբացնում է նրանց և ունակ է դարձնում Աստծո ձեռքին գործիքներ լինելու, որպեսզի իր պլանն իրականացնի: Դա հստակորեն տեսանելի էր դարձել Հոգեգալստյանը: Նրանք, ովքեր լցվել էին Սուրբ Հոգով, սկսեցին մարգարեանալ: Նրանք առանց վախենալու հայտնում էին Աստծո կամքը: Պետրոսը Հոգեգալստյան իր քարոզում հրեաներին ասաց՝ Սա Հիսուսն է, ում դուք չուզեցիք ունենալ, ում դուք խաչեցիք՝ Աստված նրան որպես Տեր և Մեսիա է ուղարկել: Գուշակվեց, որ Հիսուսը Աստծո Որդին է և Աստված նրա Հայրն է: Այսպես Սուրբ Հոգին Պետրոսին և մյուսներին ունակ դարձրեց՝ առանց վախենալու Աստծո կամքը տեղեկացնելու / հմտ. Գործք առաքելոց 2, 22-36/:

Ավելի ուշ նման դեպք տեղի ունեցավ Ստեփանոսի մոտ, ով իր հավատի պատճառով զոհաբերվեց / հմտ. Գործք առաքելոց 7,1/: Այդպես էր նաև Փիլիպպոսի պարագայում, ով եթովպական ներքինիներին տեղեկացրել էր Աստծո կամքը: Հետագայում Փիլիպպոսի չորս դուստրերը ծառայում էին որպես մարգարեներ / հմտ. Գործք առաքելոց 8,29; 21, 8,9/:

Այսօր մենք նրանք ենք, ովքեր ընտրվել են, որպեսզի Սուրբ Հոգու միջոցով տեղեկացնեն Աստծո կամքը: Երբ մենք Սուրբ Հոգուն թույլ ենք տալիս ներգործելու մեզ վրա, նա մեզ համար հնարավոր է դարձնում դա անել բոլոր իրավիճակներում: Այսօր էլ շատ մարդկանց կողմից Հիսուսը մերժվում է: Նրանք ասում են, որ Քրիստոսի ուսմունքը այլևս համահունչ չէ մեր ժամանակներին, մյուսները փորձում են Հիսուսի ուսմունքի համաձայն գործել: Երբ նրանք մտածում են Հիսուսի մասին, ապա մտածում են մեկի մասին, ով պարզապես հրաշքներ է գործել, նրանք փառաբանում են նրան նաև այս ձևով: Ուրիշները Ավետարանը այն ձևով են փոխել, որ դրանով գործնականորեն կարողանան հաջողակ լինել: Սակայն, մենք ուղարկվել ենք տարածելու ճշմարիտ Ավետարանը, ինչպես դա տեղեկացնում է առաքելոց ծառայությունը: Ճշմարիտ Ավետարանն այսօր ևս ժամանակահունչ է և կիրառելի է բոլոր իրավիճակներում:

Կորոնա- ճգնաժամից ելնելով՝ շատերը մտածում են, որ փոփոխություն է տեղի ունենալու Կորոնայից առաջ և հետո ընկած ժամանակների մեջ: Մենք պետք է մեկ անգամ ևս այն բանի մասին մտածենք, թե ինչպես ենք կազմակերպելու հասարակական կյանքն ու տնտեսությունը, թե ինչպես ենք տնօրինելու բնական ռեսուրսները, մենք պետք է մեկ անգամ ևս մեր անձնական կյանքի մասին մտածենք, որովհետև մենք չենք կարող շարունակել եսասիրության ճանապարհը, դա կտանի դեպի փակուղի:

Ես չգիտեմ, թե արդյո՞ք փոփոխություն կլինի: Ես հույս ունեմ, բայց գիտեմ նաև, որ մարդիկ մարդ կմնան: Այնուամենայնիվ, եկեք այս ժամանակներում իրականացնենք մեր առաջադրանքը, ունակ լինենք Սուրբ Հոգով միջոցով տեղեկացնելու Հիսուսի Ավետարանը խոսքով ու գործով: Հիսուսի ուսմունքը միշտ էլ արդիական է, Լեռան քարոզը արդիական է, Ոսկե կանոնը արդիական է: Մենք պետք է մեզ համապատասխան ձևով պահենք: Եկեք ամրագրենք, որ հոգևոր հարստությունն ավելի արժեքավոր է, քան՝ նյութականը: Իհարկե, մենք պետք է այն բանի համար հոգանք, որ մեր երեխաների համար ամեն ինչ լավ լինի, որ նրանք բավարար ուտելիք ունենան, կրթություն ստանան, այդ ամենը կանոնավոր է: Սակայն, եկեք



Սուրբ Հոգու միջոցով հնարավոր է անձնական հետաքրքրությունները ետին պլան մղելը և ընդհանուրին ծառայելը

չմոռանանք, որ ամենամեծ նվերը, ինչը մենք կարող ենք անել մեր երեխաների համար, դա նրանց ասել կարողանալն է, որ Հիսուս Քրիստոսը ապրում է նրանց մեջ՝ ջրով և Հոգով վերստին ծնվելու միջոցով: Ամենավեհ ճանապարհը, որով մենք մեր երեխաներին ցույց կտանք, որ սիրում ենք իրենց, դա նրանց Հիսուս Քրիստոսին մոտեցնելն է:

Մենք պետք է նաև գիտակցենք, որ մենք այս երկրի ռեսուրսներին հոգատար պետք է վերաբերենք: Դա ևս Աստծո և մերձավորի հանդեպ մեր սիրո դրսևորումն է: Երբեմն եղբայրներն ու քույրերն ինձ ասում են՝ Այո, գլխավոր առաքյալ, մենք չենք ուզում այստեղ մնալ, մենք ուզում ենք երկինք գնալ: Այս դեպքում ավելի քիչ է կարևորում երկրի համար հոգ տանելը, ավելի շատ՝ հոգու համար հոգալը , քանի որ մենք ուզում ենք երկինք գնալ: Ես ասում եմ ձեզ, որ ես էլ եմ ուզում երկինք գնալ: Սակայն, եկեք չմոռանանք, որ մարդիկ շարունակելու են ապրել այս երկրի վրա մինչև Վերջին դատաստանը: Մարդիկ պատասխանատու են երկրի համար մինչև Վերջին դատաստանը: Ի դեպ, մենք հույս ունենք, որ մենք մաս ենք կազմելու թագավորական քահանայության և Հիսուս Քրիստոսի հետ վերադառնալու ենք այս երկիր, որպեսզի Տեր Հիսուսի կողքին տեղեկացնենք Ավետարանը:

Ուրեմն, տեսնու՞մ եք: Նորառաքելական տեսանկյունից ելնելով՝ պետք է մտածել, թե ինչպես ենք վերաբերելու երկրի հետ:

Սա այն ձևն է, որով մենք կարողանալու ենք իրականացնել Որդու և Սուրբ Հոգու առաջին առաջադրանքը՝ տեղեկացնելոր առանց վախի և արիությամբ, որ Լեռան քարոզը և Ոսկե կանոնը իրենց արժեքը միշտ պահպանեն: Մենք պետք է նաև գիտակցենք, որ հոգևոր հարստությունը շատ ավելի արժեքավոր է, քան՝ նյութականը: Եկեք ամրագրենք, որ Հիսուս Քրիստոսը ապրում է մեր երեխաների սրտերում, և եկեք հոգ տանենք այս երկրի համար, որի վրա ապրում ենք:

Հիսուսի և Սուրբ Հոգու երկրորդ առաջադրանքը ժողովրդին հավաքելն էր: Հիսուսը բարձր պահանջներ ուներ: Նա ասում էր՝Ես կցանկանայի, որ ժողովուրդն ու ես միասին լինենք, ինչպես ես և Հայրն ենք միասին: Հիսուսը ցանկանում է, որ Քրիստոսի եկեղեցին միության պատկերը դառնա, ինչպես նա այն որպես Երրորդություն Աստված է ստեղծել: Հայր Աստվածը, Որդին և Սուրբ Հոգին երեք տարբեր աստվածային ,, անձինք,, են, բայց նրանք կատարյալ միավորված են:, Մենք, որ մկրտվել ենք ջրով և Սուրբ Հոգով, պետք է արտացոլենք այդ միությունը: Իհարկե, մենք մնում ենք որպես տկար մեղավորներ և մեր միությունը այնպես կատարյալ չի կարող դառնալ, ինչպես Հայր Աստծո, Որդու և Սուրբ Հոգու միությունն է: Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք շարունակել աշխատել դրա վրա և ձգտել միավորման: Եկեք հիշենք առաջին քրիստոնյաներին: Սկզբում նրանք հրեաներ էին, հետո եկան հեթանոսները: Ես կարծում եմ, որ մենք քիչ պատկերացում ունենք այն մասին, թե այն ժամանակ ինչպիսի տարաձություն կար հրեաների և հեթանոսների, հռոմեացիների և հույների միջև: Հրեաները դարեր ի վեր ունեին մշակույթ և կրոն, իսկ մյուսներն այլ էին բոլոր տեսանկյուններով: Հիսուսն ասում էր նրանց՝ Հիմա միավորված եք: Ես կարծում եմ, որ այդ տարբերությունն այնքան մեծ էր, ինչպիսին որ այսօր մենք գիտենք: Այսօր մենք ունենք տարբերություններ, որոնք հիմնված են սոցիալական կարգավիճակի վրա, սեռն ու տարիքը տարբեր են, սեռական կողմնորոշումն է տարբեր: Մեզ համար այդ տարբերությունները հսկայական են: Սակայն, ես վստահ չեմ, թե արդյո՞ք այդ տարբերություններն ավելի մեծ են, քան տարբերությունը հավատացյալ հրեայի և հեթանոսի միջև: Մենք պետք է հիշենք Հիսուսին, ով ցույց էր տալիս Սավուղին, որը որպես հրեա նրա թշնամին էր և հալածում էր նրան / Գործք 9,3-5;15/: Սուրբ Հոգու զորությամբ այն ժամանակ մարդիկ կարողանում էին հաղթահարել տարբերությունները: Ինչ նրանք արել են, կարող ենք այսօր նաև մենք անել :

Այսօրվա Կորոնա-ճգնաժամի պայմաններում մենք իմացանք մարդկության առանձնահատկության մասին: Եթե անգամ մեկը չի պահում կանոնը, վտանգի մեջ է հայտնվում ողջ համայնքը: Որոշները կարծում են, որ չպետք է այդ մասին խոսել, որ չեն ճանաչում այնպիսի մեկին, ով հիվանդ է Կորոնավիրուսով: Ես ապրում եմ այնպիսի տարածաշրջանում, որտեղ վարակը ամենաշատն է տարածված, ես գիտեմ, թե ինչ մասին եմ խոսում: Եթե մեկը չի պահպանում կանոնը, դա սպառնալիք է ողջ համայնքի համար: Այս առումով գեղեցիկ օրինակ է Քրիստոսի մարմնի մասին պատկերը: Եթե մի որևէ անդամ ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները / հմտ. Կորնթացիներին Ա 12,26/:

Կարճ ասած՝ Սուրբ Հոգու միջոցով հնարավոր է անձնական հետաքրքրությունները ետին պլան մղելը և ընդհանուրի բարօրությանը ծառայելը: Եկեք բոլոր իրավիճակներում աջակցենք սեփական հետաքրքրությունները ետին պլան

մղելուն և նպաստենք Քրիստոսի մարմնով միության բարօրությանը : Սուրբ Հոգու միջոցով մենք կարող ենք ստորադասել մեր անձնական հետաքրքրությունները և ծառայել ընդհանուրին:

Ես անդրադառնում եմ իմ երկրին: Մենք Ֆրանսիայում ամրագրել ենք, որ մարդկանց, ում մենք այնքան էլ շատ չենք արժևորել, շատ կարևոր են հասարակության համար: Նրանք մեծ հեղինակություն չունեն, որովհետև բարձր որակավորում ունեցող աշխատատեղեր չունեն և աշխատավարձն էլ քիչ է: Իսկ հիմա, այս ճգնաժամի ժամանակ, մենք ամրագրում ենք, որ առանց նրանց չի լինի: Հանկարծ հենց այդ մարդիկ դարձան մեզ համար շատ կարևոր:

Քրիստոսի մարմինն ունի տարբեր անդամներ: Շատերն ունեն առանձնահատուկ շնորհներ, մյուսներն ունեն առանձնահատուկ առաջադրանքներ, որոնք պետք է իրականացնեն: Եկեք երբեք ու երբեք չմոռանանք, որ յուրաքանչյուր առանձին անդամ նույնքան կարևոր է Տիրոջ համար, որքան՝ մյուսները: Շնորհներն ու առաջադրանքները տարբեր են, բայց Աստծո, Տեր Հիսուսի համար յուրաքանչյուր անդամ նույն արժեքն ունի, և այդպես պետք է լինի նաև մեզ համար: Սա երկրորդ առաջադրանքն էր: Ժողովրդին հավաքել, հաղթահարել տարբերությունները, հաղթահարել սեփական հետաքրքրությունները, որպեսզի ծառայեն ընդհանուրի բարեկեցությանը, և յուրաքանչյուր անդամ գնահատել նույն ձևով և նույն արժեքով:

Սուրբ Հոգու երրորդ առաջադրանքը փոփոխությունն է: Մենք գիտենք և ապրում ենք այն, որ Սուրբ Հոգին իրավիճակները չի փոխում: Նա զորավոր է, բայց նա իարվիճակները չի փոխում: Բայց նա փոխում է մեզ: Նա մեզ ավելի շատ զորություն և ուժ է տալիս: Նա մեզ օգնում է մեր մեջ ձևավորելու նոր արարածին, որպեսզի շրջանցենք այդ իրավիճակը: Եկեք թույլ տանք Սուրբ Հոգուն փոխել մեզ, որպեսզի զինված լինենք յուրաքանչյուր իրավիճակի համար: Ես ասացի, որ որոշ մարդիկ հավատում են փոփոխություններին, որոնք լինելու են ապագայում: Շուտով լինելու է փոփոխություն մեզ բոլորիս համար՝ մենք նորից գնալու ենք եկեղեցի և կարողանալու ենք այնտեղ տոնել ժամերգությունը: Ինչպե՞ս ենք նորից վերադառնալու մեր եկեղեցին: Ամեն ինչ այնպե՞ս պետք է լինի, ինչպես սկզբում էր: Մենք ունենք մեկ անգամվա շանս ինչ-որ բան փոխելու: Եկեք հիմա որոշում կայացնենք՝ եթե ես նորից վերադառնամ իմ համայնք, ես կուզենամ այլ լինել: Ես ցանկանում եմ մի քանի ճշգրտումներ անել: Եկեք այս որոշումը կայացնենք և կատարենք դրանք:

Վերջին անդրադարձը փոփոխություն թեմային՝ ես գիտեմ, որը շատերը ժամերգություններին հետևում են համացանցով: Մենք հույս ունենք, որ յուրաքանչյուրը կարող է ամրագրել, թե ինչպես է փոխվել եկեղեցին:բԱվելի շատ, քան երբևէ, Հիսուս Քրիստոսն է կենտրոնում և տեսադաշտում: Խնդրում եմ, հետևեք Սուրբ Հոգու ներշնչանքին, և եթե դուք հնարավորություն ունեք, եկեք ժամերգության և եղեք մեզ հետ միասին: Մենք ուզում ենք, որ դուք բոլորդ, նաև նրանք, ովքեր նորառաքելական չեն, ստանան ընդհանրական կերակրացանկը: Ամեն:

Հիմանական մտքեր

Քրիստոսը եկեղեցում գործում է Սուրբ Հոգու միջոցով:

Սուրբ Հոգին մեզ ունակ է դարձնում ծառայելու Քրիստոսին և սիրելու մեր մերձավորին:

Եկեղեցու միասնությունը արտացոլում է Երրորդություն Աստծո միասնությունը:

Ոչ նշաններ , ոչ պատիժներ

Տառապյալների համար աղոթել, օգնողներին շնորհակալություն հայտնել և Աստծուն վստահել,- այս է կոչ անում գլխավոր առաքյալը Կորոնա- ճգնաժամի ժամանակ: Եվ նա հստակ ասում է, որ ինքը ոչ մի կերպ չի ցանկանում տեսնել համավարակի մեկնաբանությունը:

Ես կարդացել եմ, որ միլիոնավոր մարդիկ արդեն վարակվել են: Հարյուր հազարավորներ արդեն մահացել են: Իսկ համավարակը դեռ շարունակվում է: Այն պատճառ է դառնում բազում հոգսերի ու տառապանքների: Խոսքը գնում է առողջության, կյանքի մասին: Տնտեսական հետևանքները ևս այսօր դեռ չեն կարող ճշգրիտ գնահատվել:

Իհարկե, ես գիտակցում եմ, որ Աֆրիկայի, Վենեսուելայի, Ասիայի շատ մարդկանց համար Կորոնա- ճգնաժամը մեկ տողն է կազմում տանջանքների ավելի երկար ցանկի, որոնց մեջ՝ նրանք գտնվում են: Ես միայն մեկ օրինակ եմ բերում՝ Աֆրիկայի եղբայրներն ինձ հայտնեցին, որ վերջին տարում Աֆրիկայում 140 000 երեխա մահացել է կարմրուկից:

Ի՞նչ ենք ասում մենք այս առումով: Ինչպե՞ս ենք արձագանքում:

Նախ մենք սրտանց կիսում ենք դրանից տուժած մարդկանց տառապանքը: Մենք աղոթում ենք բոլորի համար, ովքեր կարիքի մեջ են: Որպես նորառաքելական քրիստոնյաներ՝ մենք մեզ ճիշտ ենք պահում գերատեսչությունների հրահանգների կատարման առումով: Իսկ շատ կարևոր է, որ մենք օրինակ հանդիսանանք: Մենք այն շատ մարդկանցից ենք, ովքեր հանուն ուրիշների ինքնմոռաց են դառնում, շատ շնորհակալ են և աղոթում են մյուսների համար:

Ինձ համար նաև կարևոր է մեկ անգամ ևս հստակեցնելը, որ մենք Կորոնա-ճգնաժամը չենք համարում որպես մի ժամանակի նշան, որը կանխատեսում է աշխարհի վերջը կամ Հիսուս Քրիստոսի գալուստը: Աստվածաշունչը ոչինչ չի ասում Կորոնայի մասին: Մեր հավատը Հիսուս Քրիստոսի գալստյան հանդեպ չի հիմնվում նշանների վրա, այլ՝ Հիսուս Քրիստոսի խոսքերի և Սուրբ Հոգու ներգործության վրա:

Կան նաև այնպիսի մարդիկ, ովքեր կարծում են, որ Կորոնա-ճգնաժամը պատիժ է, որն Աստված է ուղարկել մարդկանց համար: Նման կարծիքը չի բխում Սուրբ Հոգուց: Սուրբ Հոգին Աստծո մասին խոսում է որպես սիրո Աստծու, ոչ թե այնպիսի Աստծո, ով ուզում է պատժել մարդկանց:

Մեկ անգամ ևս՝ Աստվածաշնչում ոչինչ չի գրված Կորոնա-ճգնաժամի մասին: Սակայն, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին մեզ ասում են, թե մենք ինչպես պետք է մեզ պահենք նման իրավիճակներում՝ մենք վստահում ենք Աստծուն և հավատարիմ ենք մնում Հիսուս Քրիստոսին հետևելու մեջ:

Լուսանկարները՝ Մարսել Ֆելրեի

ԴԱՎԻԹՆ ՕԾՎՈՒՄ Է ԹԱԳԱՎՈՐ

ԸՍՏ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ա 16, 1-13-Ի

Դավիթը ութ եղբայրներից ամենակրտսերն էր: Նա հովվում էր իր հայր Հեսսեի ոչխարները: Դավիթն ուշադիր հետևում էր, որ ոչ մի ոչխար չկորչի, իսկ երբ վայրի գազան էր մոտենում հոտին, քշում էր նրան:

Մի օր Աստված Սամուել մարգարեին ուղարկում է Բեթղեհեմ: Նա ասում է նրան.,, Գնա Հեսսեի մոտ: Նրա որդիներից մեկը պետք է դառնա Իսրայելի հաջորդ թագավորը: Դու քեզ հետ մի երինջ վերցրու և զոհաբերիր Հեսսեի ու նրա որդիների հետ: Ապա ես քեզ ցույց կտամ, թե ում պետք է օծես թագավոր,,: Սամուելն անում է այն, ինչ Աստված նրան ասում է: Բեթղեհեմում Սամուելը, Հեսսեն և նրա որդիները զոհաբերում են երինջը: Սամուելը տեսնում է Եղիաբին: Նա մտածում էր՝

Հաստատ նա է դառնալու
նոր թագավորը: Եղիաբը
բարձրահասակ էր ու ուժեղ:
Սակայն, Աստված ասաց
նրան, որ նա չպետք է դառնա
նոր թագավորը:
Հեսսեն մեկը մյուսի հետևից
կանչում է իր որդիներին:
Իրար հետևից Սամուելին են
ներկայանում յոթ որդիները:
Եղբայրներից ոչ մեկի
դեպքում Աստված նշան չէր
ցույց տալիս:

Սամուելը հարցրեց Հեսսեին. ,,
Այսքա՞ն են քո որդիները,,:
Հեսսեն պատասխանեց. ,,
Մի փոքրիկ տղա էլ ունեմ, որ
ոչխար է արարածեցնում,,:
Սամուելն ասաց. ,, Մարդ
ուղարկիր ու բերել տուր
նրան,,:
Եվ երբ Դավիթը ներս մտավ,
Աստված խոսեց. ,, Դա նա է:
Օծիր նրան թագավոր,,:
Այսպես ամենակրտսերը,
հովիվը դարձավ թագավոր,
որովհետև Աստված նրան էր
ընտրել:
Եվ Աստծո ոգին իջնում է
Դավթի վրա և մնում նրա հետ:



ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՔՍԵՍՍԻՆ՝ ՆԻՈՐ ԳԲԱՆՎԵԱՅՈՒՄ/ ԼԻԲԵՐԻԱ/

Այստեղ ես իմ ընկերների հետ եմ: Իմ քույրերն ու եղբայրները ևս լուսանկարում են: Իմ ետևում կանգնած է հորեղբայրս, նա դպրոցից հետո ինձ դասավանդում է տանը:

Լուսանկարները՝ մասնակցի

Իմ անունը Սուքսեսս է, ես ութ տարեկան եմ: Ես ապրում եմ Նիոր Գբանվեայում, Նիմբայի մարզի գյուղերից մեկում: Այն երկիրը, որտեղ ես եմ ապրում, կոչվում է Լիբերիա: Ձեզնից շատերը հավանաբար դեռ չեն լսել իմ երկրի մասին: Լիբերիան գտնվում է Արևմտյան Աֆրիկայում: 1820-ականներին այստեղ բնակություն են հաստատել ազատ արձակված ստրուկները Ամերիկայից, դրա մասին է հիշեցնում Լիբերիա անունը / լատիներենով նշանակում է ,,ազատ,,/:

Այստեղ իմ հայր Աբրահամն է / 37/, մայրս՝ Ժենետտան /28/, իմ եղբայր Դիզին / 11/ և իմ կրտսեր քույրը: Նա ունի այն նույն անունը, ինչը իմն է՝ Սուքսեսս: Մեր ընտանեկան լուսանկարի կենտրոնում ես եմ:

Այստեղ դուք ինձ տեսնում եք արմավի կարագով բրինձ ուտելիս, դա իմ ամենասիրելի ուտեստն է: Լիբերիայում բրինձը մեր հիմնական սնունդն է: Դրանից բացի, Նիմբայում յուրաքանչյուրն ուտում է Գլեագ-գբար, որը հայտնի է որպես ԳԲ: Այն ստանում են կասսավայից:

Ես շատ եմ սիրում իմ ընտանի կենդանիներին: Ես ունեմ մեկ շուն, որի անունը Ֆրիսկի է, մեկ կատու և մեկ այծ:

Սա իմ տունն է, որտեղ ես ապրում եմ իմ ընտանիքի հետ: Մեր տունն ունի երեք սենյակ:



Հաճախ մենք յոթ կիլոմետր ոտքով գյուղից դուրս ենք գնում, այնտեղից ճաշ եփելու համար փայտ ենք բերում: Մեզ ուղեկցում է մեր տատիկը, որովհետև մեր ծնողները միշտ զբաղված են լինում դաշտային աշխատանքներով:

Սա իմ դպրոցն է: Ես հաճախում եմ քաղաքային կրտսեր դպրոց, որը մոտ երեք կիլոմետր հեռու է մեր գյուղից: Առավոտները հայրս ինձ տանում է այնտեղ: Ես հաճախում եմ երկրորդ դասարան: Իմ ուսուցչուհու անունը տիկին Ռիվես է, նա շատ ընկերական է:

Մեր համայնքը կոչվում է Գբանվեա: Մենք եկեղեցու շենք չունենք, ժամերգությունները տեղի են ունենում մեր քարոզչի վերանդայում: Դուք արդեն ինձ գտա՞ք:

Կիրակի օրերին մենք գնում ենք կիրակնօրյա դպրոց: Մեր ուսուցչուհի Լուսիան մեզ շատ է սիրում և մեր լավ ընկերուհին է: Ամիսը մեկ անգամ կիարկնօրյա դպրոցի աշակերտներով ժամերգությունից հետո բեմականացում ենք անում: Մենք ցույց ենք տալիս պատմություններ Հիսուսի մասին, ով լվանում է իր աշակերտների ոտքերը:

Անցյալ հոկտեմբերին Մոնրովիայում՝ Լիբերիայի մայրաքաղաքում, մեզ այցելեց մեր գլխավոր առաքյալը: Իմ ծնողները և ես մեր մարզի շատ այլ քույր-եղբայրների հետ ճանապարհորդեցինք շուրջ 400 կիլոմետր, որպեսզի գնանք այդ ժամերգությանը: Դա առաջին անգամն էր, որ մեր երկիր այցելեց գլխավոր առաքյալ: Մենք բոլորս օրհնվեցինք:

Աղբյուրը՝ Անագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 03/2020, Լուսանկարները՝ մասնավոր՝ Nadezda Grapes - stock.adobe.com

Աստվածային կոչում և իմաստուն պաշտոնավարում

,, Աստված կանչում է պաշտոնի – դա այսօր էլ դավանանք է ,, ;- այսպես ասաց գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը: Իր ուսուցողական գրվածքներում նա վկայակոչում է աղոթքի լսելիության և աստվածային օգնությունն ապրելու մասին: Նա նաև պարզաբանում է, թե ինչպես կարելի է վարվել կասկածի և մոտիվացիոն դժվարությունների դեպքում: Վկայակոչումներ սպասավորների և հավատացյալ քույր-եղբայրների համար:

Լուսանկարը՝ Օլիվեր Դյութենի

Գլխավոր առաքյալի առաջադրանքնից մեկը կայանում է նրանում, որ ուժեղացնի իր եղբայրներին: Իսկ ովքե՞ր են իմ եղբայրները: Նախնառաջ իմ եղբայրներն են իմ մոտիկ աշխատակիցները, հատկապես շրջանային առաքյալներն ու նրա օգնականները: Իմ սրտի փափագը նրանց համար ճշմարիտ հենարան լինելն է: Իմ եղբայրներն են նաև բոլոր առաքյալները և սպասավոր եղբայրները: Նրանց ուժեղացումը, այլոց թվում, տեղի է ունենում նրանով, որ նրանց միշտ գիտակցել են տալիս աստվածային կոչումը: Այս կոչման մեջ հավատը հիմնվում է

- դավանաբանության առաջին դրույթի վրա, որը արտահայտում է հավատը Աստծո՝ Ամենազորի նկատմամբ,
- չորրորդ ու հինգերորդ դրույթների վրա, որոնցում նշվում է, որ Հիսուսն է ղեկավարում իր եկեղեցին ,և որ Աստված է ընտրում նրանց, ովքեր կանչվում են որևէ պաշտոնի ստանձման համար:

Ընտրություն, ոչ մի ստիպողականություն

Այնտեղ, որտեղ հավատացյալների թիվը նվազում է, պատահում է, որ եղբայրը կարծում է, որ իրեն ընտրել են այլընտրանքների բացակայության պատճառով, քանի որ նա միակն էր տրամադրության տակ գտնվող: Մարդկային տեսանկյունից կարող է նման մտածելակերպը արդարացված թվալ, սակայն մեր աստվածավախությունը մեզ այլ բան է սովորեցնում: Աստված ամենազոր է. ,, Այն ամենը, ինչ նա ուզում է, անում է երկնքում և երկրի վրա,, / Սաղմոս 135,6/: Աստված հավիտենական է և ամենազոր: Նրա աչքերում հավասարապես ներկա են անցյալը, ներկան և ապագան: Մենք կարծում ենք, որ Աստված ընտրում է նրանց, ովքեր կանչված են իրեն ծառայելու: Նա հարթում է բոլոր ճանապարհները, որպեսզի նրանք լինեն այնտեղ, որտեղ նա իր կողմից որոշված ժամանակում նրանց կարիքն ունի: Շատ եղբայրներ կասկածում են իրենց կոչմանը, քանի որ նրանք համոզված են, որ նրանք չեն համապատասխանում / կամ այլևս չեն համապատասխանում/ իրենց պաշտոնի պահանջներին ու առաջադրանքներին:

Իմաստավորված է, որ սպասավորները հոգու խնամքի և ուսուցման ոլորտում կոմպետենտ լինեն, և ես քաջալերում եմ բոլոր նախաձեռնությունները, որոնք արվում են այդ ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, չպետք է սպասավոր եղբայրների մոտ մեղավորի զգացումներ արթնացնել: Այսպես,

օրինակ, բոլորովին անտեղի կլինի պնդել, որ ժամերգություններին հաճախելու հետընթացը պայմանավորված է եղբայրների կոմպետենտության պակասով, Նման պնդումը կարող է հարաբերականացնել Աստծո ամենազորությունը, քանի որ անցյալում հաճախ ցույց է տրվել, որ Աստված ոչ կատարյալ մարդկանց միջոցով կամեցել է մեծ բաներ իրականացնել: Երկրորդ, այս պնդումը անարդարացի ու վիրավորական կլիներ եղբայրների հանդեպ, քանի որ ի վերջո իրենք չեն ընտրել իրենց տվյալ պաշտոնի համար, այլ հետևել են Տիրոջ կոչին: Դեռ ավելին, սպասավորները պետք է շրջանային առաքյալների կողմից արժանանան գնահատանքի, քաջալերման և սիրո:

Կանչված լինել, ոչ թե՝ նշանակվել

Այն երկրներում, որտեղ Աստծո գործը դեռ ,, նոր,, է, լինում է, որ մի քանի եղբայրներ իրենց համարում են նախևառաջ իրենց նախագահողի՝ կողմից ,,նշանակված,, աշխատակիցներ, և ոչ թե՝ որպես Հիսուս Քրիստոսի կողմից կանչված սպասավորներ: Ես միշտ խնդրում եմ տեղի առաքյալներին, որ նրանք իրենց ուսմունքով և վարմունքով անհրաժեշտն անեն, որպեսզի եղբայրների ձեռնադրման հիմքում աստվածային կանչը լինի և որոշի նրանց գործունեությունը;

Աստվածային կանչի հանդեպ հավատից հետևություն չպետք է անել, որ Աստվածն է միակ գործողը: Երրորդություն Աստված ընտրում է եղբորը և Սուրբ Հոգին այդ ընտրությունը տեղեկացնում է եկեղեցուն: Այս պարագայում եղբայրները առաջադրվում են տեղի պատասխանատու սպասավորների կողմից, իսկ առաքյալը որոշում է նրանց ձեռնադրությունը տվյալ պաշտոնի համար: Դրա համար էլ կարևոր է, որ այդ սպասավոր եղբայրները աղաչեն Սուրբ Հոգուն և սրբանան, նախքան նրանք եղբորը կկանչեն որևէ պաշտոնի : Ավանդույթի համաձայն մենք ավելի շատ թերահավատ ենք լինում այն եղբոր հանդեպ, ով ցանկություն է հայտնում ստանձնելու որևէ պաշտոն: Նման արձագանքը հասկանալի է այն տեսակետից, երբ պաշտոնը միջոց չէ ինքն իրեն առաջնային պլան մղելու: Սակայն, սխալ կլիներ նման եղբայրներին պարզապես մերժելը: Ավելի շատ մենք պետք է ջանանք նրանց ավելի լավ ճանաչելու: Եթե նրանք ազնիվ են, մենք հիմար կլինեինք, եթե մերժեինք նրանց օգնությունը :

Միասին, ոչ միայնակ

Որոշ եղբայրներ մոտիվացիա չունեն այն դժվարությունների հանդեպ, որոնք նրանց հանդիպում են պաշտոնի կատարման ժամանակ: Մենք պետք է նրանց ուժեղացնենք նրանով, որ նրանց հիշեցնենք այն բանի մասին, որ Հիսուսը մեզ կանչել է մասնակիցը լինելու նրա տառապանքին, նաև նրա ուրախությանը: ,, Սիրելիներս, տարօրինակ մի համարեք այն այրող նեղությունը, որ մեզ փորձելու համար է, որպես թե մի տարօրինակ բան պատահած լիներ ձեզ: Այլ, որպես Քրիստոսի չարչարանքներին մասնակիցներ, ուրախ եղեք, որպեսզի նրա փառքի հայտնության ժամանակ էլ ցնծաք և ուրախանաք,, / Պետրոս Ա 4,12-13/:

Տառապանքները, որոնք մենք կրում ենք, Հիսուսն էլ էր ստիպված տանում: Ինչպես նա

- մենք էլ ենք գտնվում առօրյա դժվարությունների մեջ, մեր նվիրվածությունը Աստծուն մեզ հեռու չի պահում դրանից / Մատթեոս 8,20/:
- միշտ չէ, որ մեզ հասկանում են կամ գնահատում / Մարկոս 3,21/:
- մենք առերեսվում ենք անշնորհակալությանը / Ղուկաս 17,17/:
- երբեմն բախվում ենք չհասկացվածությանը / Մատթեոս 16,8/:
- ունենում ենք պարտություններ,
- տառապում ենք, երբ Աստծո զավակները միաբան չեն,
- երբեմն ամբողջովին միայնակ ենք լինում…

Սակայն, մենք Հիսուսի նման ապրում ենք նույն ուրախությունները՝

- լված աղոթքներ,
- աստվածային օգնության ապրում, օրինակ, զոհասեղանից եկող ծառայության ժամանակ,
- աղոթքով Աստծո հետ միասնությունը,
- եղբայրական միասնությունը:

Եթե մենք ցանկանում ենք Հիսուսի համար տառապել, ապա կարող ենք նաև ապավինել նրա օգնությանը: Այն եղբայրը, ով հավատում է իր կոչմանը և վստահում է Աստծուն, ապա նա իրեն թույլ չի տա իր շրջապատում դժգոհել իր պաշտոնի բեռից : Ընդհակառակը, մենք չպետք է ամաչենք մեր սիրելիների հետ այն ուրախությունները կիսելուց, որոնք մենք ապրում ենք: Մենք պետք է թույլ տանք նրանց մասնակից լինելու անկախությանը և Աստծու հանդեպ վստահությանը, որը մենք կարող ենք շահել մեր պաշտոնավարման ընթացքում:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243,8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն , Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ-Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Եկեղեցի, որտեղ մարդիկ իրենց լավ են զգում

Կյանքը Հիսուս ՔրիստոսիԱվետարանի համաձայն ձևավորելը և նրա գալստյանը նախապատրաստված լինելը եկեղեցու ծրագիրն է,- այսպես է ասում գլխավոր առաքյալ Շնայդերը: Իսկ դա միշտ տանում է եկեղեցու առօրյայի փոփոխության: Միջազգային եկեղեցու ղեկավարը իր ուսուցողական գրվածքներում հայացք է գցում անցած տարիներին և կենտրոնում է դնում մի անտեսված խնդիր:

Որպես գլխավոր առաքյալ՝ ձեռնադրմանս ժամանակ ես արտահայտեցի այն միտքը, որ իմ ծրագիրը համահունչ է մեր եկեղեցու տեսլականին. ,, Մենք պետք է այնպիսի եկեղեցի լինենք, որտեղ մարդն իրեն լավ կզգա և լցված կլինի Սուրբ Հոգով ու Աստծո հանդեպ սիրով, իր կյանքը կձևավորի Ավետարանի համաձայն և կնախապատրաստվի Տիրոջ գալստյանը և հավիտենական կյանքին,,: Այս մտքերը ես ցանկանում եմ խորացնել հետևյալով՝

Նախևառաջ ես ցանկանում եմ արժևորել իմ նախորդներին, ովքեր արտակարգ աշխատանք են կատարել: Ղեկավարվելով Սուրբ Հոգով՝ այդ գլխավոր առաքյալները շարունակել են զարգացնել մեր գիտելիքները և հնարավոր են դարձրել եկեղեցու համար ավելի լավ կատարելու այն առաջադրանքը, որը Տերն իրենց է տվել: Ես մտադրություն չունեմ անցյալը քննադատել, այլ՝ վկայակոչել այն ճանապարհը, որը գցվել է: Կար ժամանակ, երբ ասում էին, որ Տերը նորից է գալու այն ժամանակ, երբ կկնքվի ,, վերջին հոգին,,: Պատրաստ լինել, նշանակում է կնքված լինել, հավատարիմ մնալ և հաղթել աշխարհին: Այս առումով հավատարամությունը կայանում է նրանում, որ այցելեն բոլոր ժամերգություններին և զոհաբերություն մատուցեն: ,,Աշխարհ,, հասկացության ներքո այն ժամանակ հասկացվում էր այն ամենը, ինչը եկեղեցուց դուրս է: Աշխարհը հաղթելը նշանակում էր ,, իրենց դրսից անջատելը,,: Ընդհանուր առմամբ, եկեղեցու և առաքյալների առաջադրանքը հատկապես կայանում էր նրանում, որ մարդկանց կնքեն և հավատացյալներին պաշտպանեն ,, աշխարհի,, ազդեցությունից : Ժամերգության հիմնական նպատակը նախևառաջ ուսուցումն էր, դրանում էր կայանում քարոզին և պաշտոնին վերապահված նշանակությունը: Այս ֆոնին էլ Սուրբ Հաղորդությունը ինչ-որ չափով ետ էր մղված …

Տեղեկացնող համայնքը

Այսօր մենք հարսնացուի պատրաստության մասին այլ ըմբռնում ունենք: Խոսքը նրա մասին է, որ պետք է պայքարել մեղքի և ,, հին Ադամի,, դեմ, գործել Ավետարանի համաձայն և նմանվել Հիսուսին: Դրա համար էլ Քրիստոսի սերը դառնում է կատարելության չափանիշ: Եկեղեցու միսիան, ինչպես այն այսօր սահմանվում է, արտացոլում է այդ զարգացումը: Նախ խոսքը նրա մասին է, որ պետք է գնալ դեպի բոլոր մարդիկ, որպեսզի նրանց ուսուցանվի Հիսուս Քրիստոսի Ավետարանը և նվիրաբերվի խորհուրդները: Այնուամենայնիվ, եկեղեցին պետք է նաև հավատացյալներին ճանաչել տա Աստծո սերը, ինչպես նաև՝ սրտանց միասնությունը և Աստծուն ու մերձավորին ծառայելու ուրախությունը: Մեր արարողակարգի զարգացումը միտված է նրան, որ վեր դասելով Սուրբ Հաղորդության տոնակատարությունը, մենք ուզում ենք հավատացյալների համար հնարավոր դարձնել այն, որ նրանք Սուրբ Հաղորդության միասնությունը էլ ավելի ներքնապես ապրեն Քրիստոսի և միմյանց հետ:

Սակայն, սրանով մենք չենք վերջացնում եկեղեցին իր միսիային համապատասխանեցնելու մեր ջանքերը; դավանաբանությունը եկեղեցուն ներկայացնում է երկու ասպեկտների ներքո՝

- նախ որպես աստվածային ,, կառույց,, ; որի առաջադրանքը կայանում է նրանում, որ մարդկանց համար հնարավոր դարձնի փրկությունը;
- ապա՝ նաև որպես համայնք, որը պետք է

երկրպագի ու փառաբանի Աստծուն:
Մեր ավանդույթից ելնելով՝ մենք ամենից առաջ հակված ենք առաջին կետին և եկեղեցուն տեսնում ենք որպես ,, փրկության կառույց,,: Այս ֆոնին էլ մենք միշտ -և իրավացիորեն - վեր ենք բարձրացնում առաքյալների ծառայության ու պաշտոնի մեծ նշանակությունը:

Աստծուն գովաբանող և երկրպագող համայնք

Ինչ վերաբերում է երկրորդ կետին, այն է՝ եկեղեցուն որպես Աստծուն փառաբանող ու երկրպագող համայնք, ապա մենք կարող ենք և պետք է դեռ առաջ գնանք: Ընդհանուր առմամբ, մենք եկեղեցու միասնականության չափը որպես ,, Քրիստոսի մարմին,, դեռ բավարար չափով չենք զարգացրել: Որպես այդպիսին՝ ողջ եկեղեցին կոչված է այն բանի համար, որ ծառայի Աստծուն: Ջրով և Հոգով բոլոր վերածնվածները կոչված են առաքյալների հետ միասնություն կազմելով՝ խոսքով ու գործով Ավետարանի կենդանի վկա լինել և դրանով աջակցել առաքյալներին / ՆԱԵԴ 7,1/: Որպեսզի Աստծուն երկրպագեն կամ Ավետարանի կենդանի վկա լինեն, կարիք չկա որևէ ձեռնադրված պաշտոնի: Այստեղ ,, պաշտոն,, հասկացությունը կորցնում է իր նշանակությունը հօգուտ ,,ծառայություն,, հասկացության:

Եվ այդ միասնականության չափը վերաբերում է Նորառաքելական եկեղեցու տեսլականին, որտեղ դա նշանակում է, որ Աստծո սիրով և Սուրբ Հոգով լցված մարդիկ պետք է նախապատրաստվեն Հիսուսի գալստյանը և իրենց կյանքը Ավետարանի համարպատասխան ձևավորեն: Այստեղ նկատելի է, որ ճշմարիտ սերը վճռական դեր է խաղում Քրիստոսի հարսնացուի նախապատրաստության գործում: Իսկ սերն առանց գործերի չի կարելի պատկերացնել: Որպեսզի իր հավատացյալների համար հնարավոր դարձնի Տիրոջ գալստյանը նախապատրաստվելը, եկեղեցին պետք նրանց սիրո գործերը առաջ մղելու հնարավորություն տա: Մենք պետք է հավատացյալների համար հնարավոր դարձնենք Աստծուն և մյուսներին ծառայելու ուրախությունն ապրելը: Մերձավորին սիրելը ծառայություն է, որը վերապահված է Քրիստոսի եկեղեցուն՝ որպես հավատացյալների միության : Մենք իրավունք չունենք անտեսելու Քրիստոսի եկեղեցու այս առաջադրանքը :

Ծառայող համայնք

Ծառայել Աստծուն և մերձավորին, նախ նշանակում է նվիրվել եկեղեցուն: Այս ոլորտում շատ նախաձեռնություններ չեն հասնում իրենց նպատակին միայն նրա համար, որ մեր սպասավոր եղբայրները բանականությունից վեր են: Իսկապե՞ս պետք է մեր ձեռնադրված եղբայրներից սպասել, որ նրանք ամեն ինչի մասին հոգ տանեն: Մերձավորին սիրելու համար որևէ պաշտոն անհրաժեշտ չէ: Կարելի է շատ բան ձեռնարկել՝ առանց պաշտոնական հիերարխիայի:

Մերձավորին սիրելը չի դադարում եկեղեցու դռան մոտ: Ինչպե՞ս է արտահայտվում մերձավորին սիրելը եկեղեցուց դուրս: Ավետարանը կյանքի կոչելը նշանակում է նաև աղքատներին ու տառապյալներին օգնություն տրամադրելը: Արդյոք մենք միշտ ենք հավատով լեցուն այս ոլորտում: Մարդասիրական ձեռնարկները ֆինանսավորելը լավ է և արդարացի, բայց ոչ բավարար: Ես ոչ մի դեպքում մտադիր չեմ քրիստոնեական այլ եկեղեցիներին ընդօրինակել՝ դրա համար մենք չունենք ոչ անհրաժեշտ միջոցներ, ոչ էլ փորձ: Խոսքը նաև նրա մասին չէ, որ նրանց հետ մրցակցության մեջ մտնենք, և դեռ ավելին, մեզ առաջին պլան մղենք: Ես ինձ ընդհանրապես հարց եմ տալիս՝ Ի՞նչ է Տերը սպասում մեզնից: Եվ այս հարցը մենք պետք է ներառենք մեր հետագա մտորումներում, թե արդյո՞ք խոսքը գնում է մեր ,պաշտոն, և ,ծառայություն, հասկացության կամ այլ քրիստոնյաների հետ մերձեցման հնարավորության մասին: Անշուշտ, օգտակար է այլ եկեղեցիների հետ աստվածաբանական հարցերի շուրջ քննարկումներ անելը, սակայն, ավելի կարևոր է, որ քրիստոնյաներն իրենց ուժերը միավորեն բարին անելու համար:

Եզրակացություն

- Եկեղեցու առաջադրանքը մարդկանց փրկությունը տեղեկացնելն է: Ժամերգություններին առաքյալները և նրանց կողմից լիազորված սպասավոր եղբայրները տեղեկացնում են խոսքը և նվիրաբերում խորհուրդները: Ժամերգությունը եկեղեցական կյանքի կենտրոնում է:
- Եկեղեցու առաջադրանքն նաև Աստծուն երկրպագելն ու գովաբանելն է: Այս առաջադրանքը վերապահված է բոլոր հավատացյալներին: Ժամերգությունների ժամանակ համայնքը միասին գովաբանում և երկրպագում է ծառայողի կողմից ասվող աղոթքով: Սակայն, երկրպագությունն ու գովաբանությունը կարող են կատարվել առանց ձեռնադրված սպասավոր եղբոր մասնակցության:
- Որպեսզի նախապատրաստվի Տիրոջ գալստյանը, հասարնացուական համայնքը պետք է սիրո գործեր ցույց տա: Եկեղեցու առաջադրանքներին էպատկանում հավատացյալներին Աստծուն և մերձավորին ծառայելու հնարավորություն տալը: Մենք պետք է ամենալավ միջոցները գտնենք, որպեսզի դա իրականացնենք:

Պահպանենք մեր երեխաներին՝ 2020-ի երեխաների համաշխարհային օրվա առիթով

Կարիք ունե՞ն երեխաները հիշատակի սեփական օրվա: Միավորված ազգերը հաստատում են դա և գործնականորեն՝ Երեխաներին չի պատկանում աշխարհը, թեև դա այդպես պետք է լիներ: Մտածելու տեղիք տվող մեկնաբանություններ տենդենցների դեմ:

Լուսանկարը՝ ©Pixel-Shot - stock.adobe.com

Երեխաների համաշխարհային օրը նշված է 145 պաշտոնական օրացույցներում: Դա մի ժամանակացույց է, որը հիշեցնում է երեխաների կարիքների և իրավունքների մասին: Միավորված ազգերը յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 20-ը ներառել է որպես մի օր, երբ 1989 թվականին Միավորված ազգերի լիագումար ժողովը հրաժեշտ տվեց երեխաների իրավունքների կոնվենցիային: ,,Երեխաները ունե՞ն իրավունք,,;- հարցնում են մեծերը: ,, Այո, իհարկե, մենք ունենք իրավունքներ,,;- պատասխանում են փոքրերը: ,, Իսկ ինչո՞ւ մենք պետք է դրա մասին հիշենք,,:-,, Որովհետև մենք չենք ուզում, որ դուք դա մոռանաք: Մի մոռացեք՝ յուրաքանչյուր տասը վայրկյանը մեկ երեխա է մահանում սովից՝ 1,2,3,4,5,6,7,8,9 մահ,,:

Մանկության իրավունք

Ի՞նչ իրավունքներ են դրանք: Այստեղ նշելու շատ բան կա՝ օրինակ, մանկության իրավունքը: Թեև երեխաների աշխատելու ժամանակները վաղուց անցել են, բայց դրանք դեռ չեն վերացել: Երեխաների ձեռքերը, որոնք վաղ հասակից օգնում են ապրուստի հայթհայթմանը, քիչ ժամանակ են ունենում ավելի կարևորի համար, խաղալու համար: Խաղացող երեխաները երրորդ հազարամյակում իրավունք չունեն լինել ռոմանտիկ անցյալի ժամանակավրեպ պատկեր:,, Երեխաները թանգարանում,,- ինչ սարսափելի գաղափար: ՅՈՒՆԻՍԵՖ-ը այսպես է գնահատում՝ երեխաների տասը տոկոսը դեռ ստիպված է կատարել շահագործվող աշխատանք- պղնձի հանքերում, տեքստիլ ֆաբրիկաներում, որոնք հայտնի անուն չունեն, կակաոյի պլանտացիաներում: Մեծահասակները թանկ աշխատուժեն կլիեին, իսկ գնորդ երկրների հաճախորդներն ավելի շատ մատչելի արտադրանք են ուզում: Արատավոր երևույթ:

Նաև , ոչ, ասել կարողանալու իրավունքն ամբողջ կյանքում ինքնակերտման հարց է:Երեխան, ով միշտ համաձայնում է, չունի իր սեփական կարծիքը: Միայն հստակ ,ոչ, ասելն է տանում անհատականության: Եվ նման մի ,ոչը, չպետք է հիմնավորված լինի, որպեսզի արժևորվի: ,, Ոչը՝ ոչ է,,- վերջակետ: Իսկ ով երեխաներին ուզում է դաստիարակել զրուցակից և համախոհ լինելու համար, պետք է նրանց թույլ տա որոշելու: Երեխան, ով իրավունք ունի ,ոչ, ասելու, այո է ասում ինքն իրեն:

Ինչի կարիք ունեն երեխաները

Իրականում երեխաները կարիք ունեն՝

- ընկերների, խորհրդատուների, ուսուցիչների, ովքեր ժամանակ կունենան իրենց համար և կլսեն իրենց,
- պաստպարվելու վայրեր, որտեղ կերաշխավորվի խաղաղությունն ու պաշտպանությունը,

Լուսանկարը՝ Սուսաննե Դիեթմանի / Երեխաների միսիոներական գործ

- երազանքների, որոնք ինչ-որ ժամանակ իրականություն կդառնան: Երբ երազանքները թռչել են սովորում, դեպի հորիզոն ճանապարհորդությունը արժնորվում է:

Երեխաները կարիք ունեն բարյացակամ մարդկանց, ովքեր մեծահոգի են, ովքեր նրանց աշխարհով են հետաքրքրվում՝ առանց նրանց թերությունները նշելու, ովքեր կարողանում են իրենց փոքրացնել, որպեսզի տեսնեն երեխաների աչքերով: Միայն այսպես, և ոչ միայն օրենքներով կամ գերատեսչական կարգավորումներով, երեխաների իրավունքները կդառնան իրավունքներ, և ոչ թե՝ միայն պարտականություններ:

Ձեռքերը պետք է օրհնեն, ոչ թե արգելեն

Ուշադրություն՝ որոշ մշակույթներ բացառում են երեխաների կարծիքները: Դա վերաբերում է նաև այսօրվա ժամանակների շատ մշակույթների: Թեև թղթի վրա ամեն ինչ սև և սպիտակ է երևում, բայց իրականությունը հաճախ այլ է : Քրիստոնեական դավանանքի համար Հիսուս Քրիստոսը չափանիշ է սահմանել. ,, Այն ժամանակ նրա մոտ մանուկներ բերվեցին, որ նրանց վրա ձեռք դնի ու աղոթք անի, իսկ նրա աշակերտները սաստում էին բերողներին: Հիսուսն ասաց. ,, Թույլ տվեք այդ մանուկներին և մի արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև երկնքի արքայությունը այդպիսիներինն է: Եվ նրանց վրա ձեռք դրեց ու այդտեղից գնաց,, / Մատթեոս 19, 13-15/:

Այնքան ժամանկ, երբ դեռ մի երեխա ստիպված կլինի աշխատել պղնձի հանքում, կարիք կա երեխաների համաշխարհային օրվա: Այնքան ժամանակ, երբ դեռ մեծեր կան, ովքեր արգելում են երեխային՝ ասելու,ոչ, կամ անտարբեր են նրանց հանդեպ, մենք այդ հիշատակման օրվա կարիքն ունենք:

Աստվածաշնչից

Վեճ աշակերտների շրջանում / Մատթեոս 18,1-5/ ,, Այն օրը աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին.,, Մեզնից ո՞վ է մեծ երկնքի արքայության մեջ,,: Եվ Հիսուս իր մոտ կանչեց մի մանուկ, կանգնեցրեց նրան նրանց մեջ ու ասաց .,, Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի: Արդ, ով իր անձը խոնարհեցնում է ինչպես այս մանուկը, երկնքի արքայության մեջ նա է մեծ: Եվ ով որ իմ անունով մի այսպիսի մանուկ ընդունելու լինի, ինձ կընդունի,,:

New Apostolic Church
International